ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«16» «հոկտեմբեր» 2025 թվական № 448-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով, փոխվարչապետի 2025 թվականի հունիսի 13-ի թիվ 389-Ն որոշմամբ և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 16-ի N 42/45.45/23234 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանով հաստատված 300-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության առաջին բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.4-Ղ4-1), 448-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության առաջին բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-33.4-Մ2-1), 301-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության առաջին բաժնի զորահավաքի գծով ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-33.4-Մ3-1), 302-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության առաջին բաժնի զորահավաքի գծով ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-33.4-Մ5-1) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի **«3.3.Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը»** բաժնի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Պետական գաղտնիքին առնչվելու համապատասխան ձևի առնվազն երեք տարվա թույլտվություն:»:

7/16/2025

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Signed by: ATANESYAN SERGO 4007880425 Ս.ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երևան